յաջողոի՞ իրան քաղել իր հունձքը: Նրա տան շարժական իրեղէնները միշտ թաղոած էին հողի մէջ կամ նրանց համար յատուկ շինոած ստորերկրեայ պահարաններում, որպէսզի, փախուստների ժամանակ թշնամու ձեռքը չընկնեն: Բայց յաջողւո՞ւմ էր նրան միւս անգամ դուրս բերել իր կայքը գերեզմանից, — խիստ հազիւ, որովհետեւ շատ անգամ թաքցնողը, հանդիպելով թշնամուն, զրկւում էր կեանքից եւ իր պահարանի գաղտնիքը տանում էր դէպի միւս աշխարհը: Այս է պատճառը, որ Հայաստանում մինչեւ այսօր գետինը փորելու ժամանակ գտնւում են այնքան շատ պղնձէ, երկաթէ իրեղէններ, կանանց զարդեր. դրանք պատերազմների միջոցներում թաքցրած կայքեր են, որոնց տէրերն իրանց հետ իջել էին գերեզման:

Այսպէս էր այն ժամանակ հայի վիճակը Տարօնի եւ Վասպուրականի մէջ, նրա դժբախտութիւնն աւելի նրանումն էր կայանում, որ տիրող բռնաւորը-քուրդը — երկրի տէրը չէր, այլ զանազան թափառական ցեղերից բաղկացած մի ամբոխ, որ կատաղի մրրիկի նման, տարուբերւում էր երկրի մի կողմից դէպի միւսը, ոչնչացնելով ամէն կենդանութիւն, ամէն ինչ, որ արդիւնաբերել էր արհեստը եւ մարդու աշխատասէր ձեռքը:

Քուրդը պետական փառասիրութիւն չունէր, եւ ոչ հասկանալի էր նրան աշխարհակալութեան հպարտութիւնը: Նա նայում էր իր նոաճած ժողովրդի վրայ, որպէս այն սարերի խոտերի վրայ, ուր արածում էին նրա անասունները: Մէկը — ժողովուրդը-մատակարարում էր իրա՝ քրդի պիտոյքները, միւսը-սարերի խոտերը ճարակ էին տալիս նրա հօտերին, որպէս վերջինի աճեցնելու եւ մշակելու համար նա հոգ չէր տանում, նոյնպէս եւ ժողովուրդը խնամելու մասին նա չէր մտածում: Քուրդը վստահ էր, թէ աշխարհի մէջ ամէն տեղ բաց է նրա ասպարէզը, ամէն տեղ կարող է գտնել այս տեսակ արօտներ, քանի իր սուրը կտրում է, քանի իր թեւքը շարժւում է:

Վասպուրականի եւ Տարօնի նահանգներում, բացի ներքին խռովութիւնները քրդերի կողմից, լինում էին եւ յարձակումներ արտաքին թշնամիներից: Քիչ չէր պատահում, պարսիկներն արշաւանքներ էին գործում եւ բազմաթիւ բախտախնդիր հրոսակներով թափւում էին այն երկրների վրայ: Պատերազմը վերջանում էր կրակով, արիւնով, գերեւարութեամբ եւ աւարառութեամբ: Այսպիսի դէպքերում վտանգը հասնում էր դարձեալ բնիկ ժողովրդին, որովհետեւ քրդերը, եթէ թշնամուն ընդդիմանալու կարողութիւն չունէին, թողնում էին երկիրը, քաշւում էին դէպի լեռների անմատչելի տեղերը, եւ սպասում էին մինչեւ թշնամու հեռանալը:

Քիչ չէր պատահում, եւ Օսմանեան պետութիւնն ուղարկում էր զօրքեր խաղաղացնելու իր տէրութեան սահմանագլուխները եւ նոաճելու ապս-